Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-232[90]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, որպես կանոն,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնելու» բառերը փոխարինել «դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 26-րդ հոդվածում 5-րդ մասում «բժշկական» բառից հետո լրացնել «(բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի)» բառերը:

Հոդված 4. Օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «քրեական պալատի» բառերից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով՝ հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմի» բառերով:

Հոդված 5. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետից հանել «քրեական գործերով» բառերը.

2) 5-րդ կետից հանել «քրեական գործով» բառերը:

Հոդված 6. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 8-րդ մասում «դատախազին ՝» բառը և կետադրական նշանը փոխարինել «դատախազին՝» բառով և կետադրական նշանով:

Հոդված 7. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված 8. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «արձակում է» բառերը փոխարինել «արձակում» բառով:

Հոդված 9. Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետում «և վերաքննիչ» բառերը փոխարինել «, վերաքննիչ և վճռաբեկ» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամը իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո՝ պաշտոնավարման ընթացքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի առնչությամբ, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված սխալների և չարաշահումների քննության դեպքի:»:

Հոդված 11. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «բովանդակությանը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ

վարութային այլ գործողության, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները» բառերը:

Հոդված 12. Օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «անհապաղ» բառը, «քննության առնվի» բառերից հետո լրացնել « և լուծվի» բառերը:

Հոդված 13. Օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված 14. Օրենսգրքի 168-րդ հոդվածի 4-րդ մասում «չորս ամիս անց» բառերից հետո լրացնել «, սակայն ոչ ուշ, քան նշված ժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում» բառերը:

Հոդված 15. Օրենսգրքի 178-րդ հոդվածի 7-րդ մասում «նախաձեռնվում» բառից հետո լրացնել «, որի արձանագրությանը կցվում են համապատասխան փաստը հաստատող վարույթի նյութերը» բառերը:

Հոդված 16. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասում «որի վերաբերյալ» բառերից հետո լրացնել «հաղորդումը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում» բառերը:

Հոդված 17. Օրենսգրքի 180-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրենց իրավասության սահմաններում նախաքննությունը կատարում են քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»:

Հոդված 18. Օրենսգրքի 181-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 181. Քննչական ենթակայությունը**

1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

3. Նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

4. Նախաքննությունը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

5. Այն դեպքում, երբ մեկից ավելի հանցանքների կապակցությամբ նախաձեռնված վարույթով հանցանքներից առնվազն մեկը նախատեսված է սույն հոդվածի 1-ին մասով, նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

6. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթները միացվել են մեկ վարույթում, նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

7. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված անձանց վերագրվող հանցանքներով միևնույն վարույթով նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը նախաձեռնել է տվյալ քրեական վարույթը, բացառությամբ այն դեպքի, երբ վերադաս դատախազը տվյալ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մյուս մարմնին՝ անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով:

8. Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար:

9. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան ձևակերպված՝ քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն հոդվածով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան:»:

Հոդված 19. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 7-րդ մասում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված 20. Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված 21. Օրենսգրքի 207-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «գործի» բառը փոխարինել «քրեական» բառով, իսկ «գործով» բառը հանել.

2) 5-րդ մասում «Գործով» բառը փոխարինել «Քրեական» բառով:

Հոդված 22. Օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 3-րդ կետի «Խուզարկությունը» բառը փոխարինել «խուզարկությունը» բառով.

2) 4-րդ կետի «Առգրավումը» բառը փոխարինել «առգրավումը» բառով, իսկ «այլ ձևերի առգրավման,» բառերից հետո լրացնել « էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների առգրավման,» բառերը.

3) լրացնել նոր՝ 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) քննումը:»:

Հոդված 23. Օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասում «տեղեկատվության պահանջի» բառերից առաջ լրացնել «փաստաթղթի զննության, » բառերը:

Հոդված 24. Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի» բառերը:

Հոդված 25. Օրենսգրքի 243-րդ հոդվածի 10-րդ մասում «սույն օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

Հոդված 26. Օրենսգրքի 260-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «վարույթները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին» բառերով.

2) 3-րդ մասում «բերվել» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմին ընդդատյա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ բոլոր այն վարույթները, որոնցով վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերի դեմ վերանայման բողոք է բերվել:»:

Հոդված 27. Օրենսգրքի 261-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «առաջին ատյանի» բառերից հետո լրացնել «ընդհանուր իրավասության» բառերը.

2) 2-րդ մասում «տարբեր դատարանների» բառերից առաջ լրացնել «առաջին ատյանի ընդհանուր իրավասության» բառերը.

3) 6-րդ մասում «դատարանին» բառերից առաջ լրացնել «առաջին ատյանի ընդհանուր իրավասության» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մաս.

«7. Սույն հոդվածի 1-5-րդ մասերը չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների վրա, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:»:

Հոդված 28. Օրենսգրքի 262-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «առաջին ատյանի» բառերից հետո լրացնել «ընդհանուր իրավասության» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է հակակոռուպցիոն դատարանը:»:

Հոդված 29. Օրենսգրքի 263-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վարույթն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա տարածքային ընդդատությանը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ և 6-րդ մասեր.

«5. Վարույթն ըստ ընդդատության ստացած Հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, մինչև նախնական դատալսումներ նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի ընդդատության հարցը: Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը մինչև որոշում կայացնելը խորհրդակցում է Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների հետ՝ վարույթի ընդդատության վերաբերյալ նրանց դիրքորոշումը պարզելու նպատակով:»:

Հոդված 30. Օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) եզրափակիչ ելույթներին պատրաստվելու համար:»:

Հոդված 31. Օրենսգրքի 295-րդ հոդվածի 7-րդ մասում «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասում «կամ փոխելու» բառերը փոխարինել «, փոխելու կամ անփոփոխ թողնելու» բառերով:

Հոդված 33. Օրենսգրքի 347-րդ հոդվածի 7-րդ մասում «կիրառելու» բառը փոխարինել «նշանակելու, պատժից ազատելու» բառերով, իսկ «չկիրառելու կամ պատժից ազատելու» բառերը՝ «չնշանակելու» բառով:

Հոդված 34. Օրենսգրքի 350-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե դատապարտված մեղադրյալը կալանքի տակ է, ապա նրան պատժից ազատելու, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելու կամ մեղադրյալին այն ժամկետով ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտելու դեպքում, որը չի գերազանցում անազատության մեջ փաստացի մնալու ժամկետը, դատարանը դատական նիստի դահլիճից նրան անհապաղ ազատ է արձակում:»:

Հոդված 35. Օրենսգրքի 352-րդ հոդվածի 4-րդ մասում «չմտած» բառը փոխարինել «մտած» բառով, իսկ 5-րդ մասում «նախատեսված» բառից հետո լրացնել «՝ օրինական ուժի մեջ մտած» բառերը:

Հոդված 36. Օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ակտը» բառից առաջ լրացնել «դատական» բառը:

Հոդված 37. Օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասում «Վերաքննիչ» բառը փոխարինել «Վճռաբեկ» բառով:

Հոդված 38. Օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը (բարեկամական կարգավորումը) կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը.»:

Հոդված 39. Օրենսգրքի 419-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հատուկ ուսումնադաստիարակչական» բառերը փոխարինել «վերականգնողական» բառով.

2) 2-րդ մասում «Հատուկ ուսումնադաստիարակչական» բառերը փոխարինել «Վերականգնողական» բառով:

Հոդված 40. Օրենսգրքի 447-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով.

«4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերը չեն տարածվում իրավաբանական անձի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված

կոռուպցիոն հանցանքներով վարույթների վրա, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:»:

Հոդված 41. Օրենսգրքի 460-րդ հոդվածի 3-րդ մասում «կիրառման» բառը փոխարինել «նշանակման» բառով:

Հոդված 42. Օրենսգրքի 483-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 483. Անցումային դրույթներ**

1. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը հետաքննության մարմնի կողմից ստացված հանցագործության մասին հաղորդումները, որոնցով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում չի կայացվել, քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, հսկող դատախազի միջոցով ուղարկվում են քննիչին՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

2. 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հետաքննության մարմնի վարույթում գտնվող քրեական գործերը սույն օրենսգրքով սահմանված կարգով նախաքննություն կատարելու համար սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, հսկող դատախազի միջոցով ուղարկվում են քննիչին՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

3. Սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման ժամկետները գործում են 2023 թվականի հունվարի 1-ից հետո մեղադրյալի կարգավիճակ ստացած անձանց համար: Մինչ այդ մեղադրյալի կարգավիճակ ստացած անձանց նկատմամբ սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման ժամկետները սկսում են հաշվարկվել 2023 թվականի հունվարի 1-ից:

4. Մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը կասեցված քրեական գործերով վարույթները մեկ տարվա ընթացքում քննիչի կամ դատարանի որոշմամբ վերսկսվում են և քննվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և բողոքների քննությունն իրականացվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

6. Այն քրեական գործերը, որոնցով սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նախաքննությունն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ կամ եզրափակիչ ակտով, դատարան են ուղարկվում և քննվում սույն օրենսգրքով սահմանված կարգով:

7. Այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, քննվում և լուծվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

8. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

9. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների, ինչպես նաև հիմնարար խախտման հիմքով բերված բողոքները սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

10. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ 2022 թվականի հուլիսի 1-ից սկսած բացառիկ վերանայման բողոքները բերվում և քննվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

11. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն ստացված ապացույցների թույլատրելիությունը որոշվում է դրանց ձեռքբերման ժամանակ գործող օրենսդրությանը համապատասխան:

12. Սույն օրենսգրքի 8-րդ հոդվածով սահմանված վարութային գործողությունների՝ էլեկտրոնային եղանակով ամրագրմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

13. Սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը՝ հակակոռուպցիոն պալատին վերաբերող կարգավորումների մասով, 260-րդ հոդվածի 3-րդ մասը՝ 4-րդ մասի վերաբերյալ բացառության մասով, և 4-րդ մասը ուժի մեջ են մտնում Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի գործելու պահից: Սույն օրենսգրքի 31-րդ

հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանում բողոքների վերաբաշխումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

14. Սույն օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

15. Սույն օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ին: Մինչ այդ գործում են սույն հոդվածի 16-րդ և 17-րդ մասերով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

16. Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը գործում են քննչական ենթակայության հետևյալ կանոնները՝

1) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները, եթե հանցանքները կատարվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի ա) ենթակետով սահմանված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող, ինչպես նաև բ-զ ենթակետերում նշված պաշտոնատար անձանց կողմից՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 272-277-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնցով նախաքննությունը կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

2) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 441-րդ և 549-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները, բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ

շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 218-221-րդ, 231-րդ, 232-րդ, 435-439-րդ, 442-445-րդ, 480-482-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում են բացառապես հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները,

4) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 133-րդ, 134-րդ, 136-138-րդ, 142-146-րդ, 149-154-րդ, 308-314-րդ, 316-րդ, 317-րդ, 331-333-րդ, 349-րդ, 350-րդ, 418-429-րդ, 451-րդ, 469-471-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

5) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 267-269-րդ, 271-րդ, 281-րդ, 282-րդ, 284-290-րդ, 294-րդ, 409-րդ, 410-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի կամ պետական եկամուտների կոմիտեի քննիչները,

6) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-293-րդ, 340-րդ, 399-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության կամ պետական եկամուտների կոմիտեի քննիչները,

7) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 135-րդ, 139-141-րդ, 147-րդ, 148-րդ, 329-րդ, 330-րդ, 430-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի կամ ազգային անվտանգության ծառայության քննիչները,

8) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

9) Նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

10) Նախաքննությունը քննչական կոմիտեում, պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույն մասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

11) Նախաքննությունն ազգային անվտանգության ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույն մասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

12) Սույն մասի 5-7-րդ կետերով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը նախաձեռնել է տվյալ քրեական վարույթը, բացառությամբ այն դեպքի, երբ վերադաս դատախազը տվյալ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մյուս մարմնին՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով,

13) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 182-րդ, 238-րդ, 295-րդ, 446-րդ, 473-476-րդ, 483-րդ, 485-րդ, 495-րդ, 503-րդ, 504-րդ, 509-511-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում է նախաքննության այն մարմինը, որի կողմից իրականացվող վարույթի ընթացքում բացահայտվել է տվյալ հանցանքը, բացառությամբ սույն մասի 9-11-րդ կետերով նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

14) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում է նախաքննության այն մարմինը, որի կողմից իրականացվող վարույթի ընթացքում բացահայտվել է տվյալ հանցանքը, բացառությամբ սույն մասի 1-ին կետով նախատեսված դեպքերի,

15) Նախաքննության տարբեր մարմինների քննիչներին ենթակա հանցանքների վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու կամ վարույթի ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն մասի 13-րդ կետով չնախատեսված հանցանքի բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է վերադաս դատախազը՝ համակողմանի և անաչառ

նախաքննություն ապահովելու նպատակով, բացառությամբ սույն մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների, ինչպես նաև սույն մասի 9-11-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

16) Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է պատշաճ, համակողմանի և անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար,

17) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան ձևակերպված՝ քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն մասով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան:

17. 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունվարի 1-ը գործում են քննչական ենթակայության հետևյալ կանոնները՝

1) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները,

2) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 133-րդ, 134-րդ, 136-138-րդ, 142-146-րդ, 149-154-րդ, 308-314-րդ, 316-րդ, 317-րդ, 331-333-րդ, 349-րդ, 350-րդ, 418-429-րդ, 451-րդ, 469-471-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

3) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 135-րդ, 139-141-րդ, 147-րդ, 148-րդ, 291-293-րդ, 329-րդ, 330-րդ, 340-րդ, 399-րդ, 430-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի կամ ազգային անվտանգության ծառայության քննիչները,

4) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

5) Նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

6) Նախաքննությունը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույնմասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

7) Նախաքննությունն ազգային անվտանգության ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույն մասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

8) Սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը նախաձեռնել է տվյալ քրեական վարույթը, բացառությամբ այն դեպքի, երբ վերադաս դատախազը տվյալ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մյուս մարմնին՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով,

9) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 182-րդ, 238-րդ, 295-րդ, 446-րդ, 473-476-րդ, 483-րդ, 485-րդ, 495-րդ, 503-րդ, 504-րդ, 509-511-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում է նախաքննության այն մարմինը, որի կողմից իրականացվող վարույթի ընթացքում բացահայտվել է տվյալ հանցանքը, բացառությամբ սույն մասի 5-7-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

10) Նախաքննության տարբեր մարմինների քննիչներին ենթակա հանցանքների վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու կամ վարույթի ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն մասի 9-րդ կետով չնախատեսված հանցանքի բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է վերադաս դատախազը՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով, բացառությամբ սույն մասի 1-ին կետով

նախատեսված հանցանքների, ինչպես նաև սույն մասի 5-7-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

11) Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է պատշաճ, համակողմանի և անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար,

12) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան ձևակերպված՝ քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն հոդվածով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան:

18. Սույն օրենսգրքի 192-195-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

19. Սույն օրենսգրքի 212-րդ, 329-րդ և 415-րդ հոդվածներով սահմանված՝ հոգեբանի մասնակցության փոխարեն մինչև 2023 թվականի հունվարի 1-ը իրավաչափ համարել մանկավարժի կամ սոցիալական աշխատողի մասնակցությունը:

20. Սույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից: Մինչ այդ սույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված քննչական գործողությունները կատարվում են ընթերակաների պարտադիր մասնակցությամբ՝ սույն օրենսգրքի 210-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բացառության հաշվառմամբ:

21. Սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասը և 262-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ են մտնում հակակոռուպցիոն դատարանի գործելու պահից:

22. Սույն օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև տարածքային ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները կիրառվում են սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվանից, առաջին ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն

պալատի նախագահի նշանակման պահից: Մինչև սույն հոդվածի՝ համապատասխան կարգավորումը կիրառվելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության մասին համապատասխան վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից՝ համապատասխան որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

23. Սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասի և 262-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի (վարույթների) վերաբաշխումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

24. Սույն օրենսգրքի 53-րդ գլուխն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

25. Սույն օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքով վարույթը կիրառվում է այն իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների ստեղծումից կամ դատավորների նշանակումից հետո սկսված քրեական վարույթներով: Մինչ այդ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

26. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվում:»:

Հոդված 43. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-232[90]-11.04.2022-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-232[90]-11.04.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, որպես կանոն,» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնելու» բառերը փոխարինել «դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումն իրականացվում է» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 26-րդ հոդվածում 5-րդ մասում «բժշկական» բառից հետո լրացնել «(բացառությամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ այն ստանալու մասին տվյալի)» բառերը:

Հոդված 4.~~**Հոդված 2.**~~ Օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում «քրեական պալատի» բառերից հետո լրացնել «, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ

վարույթներով՝ հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմի» բառերով:

Հոդված ~~3~~5. Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետից հանել «քրեական գործերով» բառերը.

2) 5-րդ կետից հանել «քրեական գործով» բառերը:

Հոդված ~~4~~6. Օրենսգրքի 36-րդ հոդվածի 8-րդ մասում «դատախազին ՝» բառը և կետադրական նշանը փոխարինել «դատախազին՝» բառով և կետադրական նշանով:

Հոդված ~~5~~7. Օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված ~~6~~8. Օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «արձակում է» բառերը փոխարինել «արձակում» բառով:

Հոդված ~~7~~9. Օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետում «և վերաքննիչ» բառերը փոխարինել «, վերաքննիչ և վճռաբեկ» բառերով:

Հոդված ~~8~~10. Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամը իր լիազորությունների իրականացման ժամանակահատվածում և դրանից հետո՝ պաշտոնավարման ընթացքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի առնչությամբ, բացառությամբ տվյալ վարույթի ընթացքում թույլ տված սխալների և չարաշահումների քննության դեպքի:»:

Հոդված ~~9~~11. Օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետում «բովանդակությանը» բառից հետո լրացնել «, ինչպես նաև առանց վարույթն իրականացնող մարմնի թույլտվության

չհրապարակել իր մասնակցությամբ կատարված ապացուցողական կամ վարութային այլ գործողության, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկությունները» բառերը:

Հոդված 12. Օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «անհապաղ» բառը, «քննության առնվի» բառերից հետո լրացնել « և լուծվի» բառերը:

Հոդված ~~10~~13. Օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված ~~11~~14. Օրենսգրքի 168-րդ հոդվածի 4-րդ մասում «չորս ամիս անց» բառերից հետո լրացնել «, սակայն ոչ ուշ, քան նշված ժամկետի ավարտից հետո 10 օրվա ընթացքում» բառերը:

Հոդված 15. Օրենսգրքի 178-րդ հոդվածի 7-րդ մասում «նախաձեռնվում» բառից հետո լրացնել «, որի արձանագրությանը կցվում են համապատասխան փաստը հաստատող վարույթի նյութերը» բառերը:

Հոդված ~~12~~16. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 1-ին մասում «~~քննիչը» բառը փոխարինել «քննիչն այն~~որի վերաբերյալ» բառերից հետո լրացնել «հաղորդումը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում» ~~բառերով~~բառերը:

Հոդված ~~13~~17. Օրենսգրքի 180-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Իրենց իրավասության սահմաններում նախաքննությունը կատարում են քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:»:

Հոդված 18. Օրենսգրքի 181-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 181. Քննչական ենթակայությունը**

1. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

2. Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

3. Նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները:

4. Նախաքննությունը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

5. Այն դեպքում, երբ մեկից ավելի հանցանքների կապակցությամբ նախաձեռնված վարույթով հանցանքներից առնվազն մեկը նախատեսված է սույն հոդվածի 1-ին մասով, նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

6. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթները միացվել են մեկ վարույթում, նախաքննությունը կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

7. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված անձանց վերագրվող հանցանքներով միևնույն վարույթով նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը նախաձեռնել է տվյալ քրեական վարույթը, բացառությամբ այն դեպքի, երբ վերադաս դատախազը տվյալ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մյուս մարմնին՝ անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով:

8. Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար:

9. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան ձևակերպված՝ քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն հոդվածով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան:»:

Հոդված 19. Օրենսգրքի 202-րդ հոդվածի 7-րդ մասում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված ~~14~~20. Օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում «դատական» բառը փոխարինել «վարութային» բառով:

Հոդված ~~15~~21. Օրենսգրքի 207-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասում «գործի» բառը փոխարինել «քրեական» բառով, իսկ «գործով» բառը հանել.

2) 5-րդ մասում «Գործով» բառը փոխարինել «Քրեական» բառով:

Հոդված ~~16~~22. Օրենսգրքի 209-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 3-րդ կետի «Խուզարկությունը» բառը փոխարինել «խուզարկությունը» բառով.

2) 4-րդ կետի «Առգրավումը» բառը փոխարինել «առգրավումը» բառով, իսկ «այլ ձևերի առգրավման,» բառերից հետո լրացնել « էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների առգրավման,» բառերը.

3) լրացնել նոր՝ 5-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) քննումը:»:

Հոդված ~~17~~23. Օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասում «տեղեկատվության պահանջի» բառերից առաջ լրացնել «փաստաթղթի զննության, » բառերը:

Հոդված ~~18~~24. Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի» բառերը:

Հոդված ~~19~~25. Օրենսգրքի 243-րդ հոդվածի 10-րդ մասում «սույն օրենսգրքով» բառերը փոխարինել «օրենքով» բառով:

Հոդված ~~20~~26. Օրենսգրքի 260-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «վարույթները» բառից հետո լրացնել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին» բառերով.

2) 3-րդ մասում «բերվել» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանակությամբ նոր՝ 4-րդ մաս.

«4. Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի՝ կոռուպցիոն հանցանքների քննության դատական կազմին ընդդատյա են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ բոլոր այն վարույթները, որոնցով վերաքննիչ քրեական դատարանի դատական ակտերի դեմ վերանայման բողոք է բերվել:»:

Հոդված ~~21~~27. Օրենսգրքի 261-րդ ~~հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մասով.~~հոդվածում՝

1) 1-ին մասում «առաջին ատյանի» բառերից հետո լրացնել «ընդհանուր իրավասության» բառերը.

2) 2-րդ մասում «տարբեր դատարանների» բառերից առաջ լրացնել «առաջին ատյանի ընդհանուր իրավասության» բառերը.

3) 6-րդ մասում «դատարանին» բառերից առաջ լրացնել «առաջին ատյանի ընդհանուր իրավասության» բառերը.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ մաս.

«7. Սույն հոդվածի 1-5-րդ մասերը չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների վրա, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:»:

Հոդված ~~22~~28. Օրենսգրքի 262-րդ ~~հոդվածը~~հոդվածում՝

1) 1-ին մասում «առաջին ատյանի» բառերից հետո լրացնել «ընդհանուր իրավասության» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Եթե մինչդատական վարույթում միացված վարույթներից առնվազն մեկը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ է, ապա մեղադրանքը քննում է հակակոռուպցիոն դատարանը:»:

Հոդված ~~23~~29. Օրենսգրքի 263-րդ ~~հոդված լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ մասով.~~հոդվածում՝

~~«~~1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Վարույթն ըստ ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա տարածքային ընդդատությանը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5~~.~~-րդ և 6-րդ մասեր.

«5. Վարույթն ըստ ընդդատության ստացած Հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, մինչև նախնական դատալսումներ նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն հոդվածի ~~2-4-րդ մասերը չեն տարածվում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով~~4-րդ մասով նախատեսված ~~կոռուպցիոն հանցանքների~~

~~վերաբերյալ վարույթների նկատմամբ, որոնք ամեն~~ դեպքում~~ փոխանցվում են~~՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահը, իսկ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի ընդդատության հարցը: Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը մինչև որոշում կայացնելը խորհրդակցում է Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն ~~դատարանին~~պալատների նախագահների հետ՝ վարույթի ընդդատության վերաբերյալ նրանց դիրքորոշումը պարզելու նպատակով:»:

Հոդված ~~24~~30. Օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) եզրափակիչ ելույթներին պատրաստվելու համար:»:

Հոդված ~~25~~31. Օրենսգրքի 295-րդ հոդվածի 7-րդ մասում «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «1-3-րդ» բառերով:

Հոդված ~~26~~32. Օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ մասում «կամ փոխելու» բառերը փոխարինել «, փոխելու կամ անփոփոխ թողնելու» բառերով:

Հոդված ~~27~~33. Օրենսգրքի 347-րդ հոդվածի 7-րդ մասում «կիրառելու» բառը փոխարինել «նշանակելու, պատժից ազատելու» բառերով, իսկ «չկիրառելու կամ պատժից ազատելու» բառերը~~ փոխարինել~~՝ «չնշանակելու» բառով~~, իսկ «կիրառելու» բառը՝ «նշանակելու, պատժից ազատելու» բառերով~~:

~~**Հոդված 28.**~~

Հոդված 34. Օրենսգրքի 350-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Եթե դատապարտված մեղադրյալը կալանքի տակ է, ապա նրան պատժից ազատելու, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելու կամ մեղադրյալին այն ժամկետով

ազատությունից զրկելու հետ կապված պատժի դատապարտելու դեպքում, որը չի գերազանցում անազատության մեջ փաստացի մնալու ժամկետը, դատարանը դատական նիստի դահլիճից նրան անհապաղ ազատ է արձակում:»:

Հոդված 35. Օրենսգրքի 352-րդ հոդվածի 4-րդ մասում «չմտած» բառը փոխարինել «մտած» բառով, իսկ 5-րդ մասում «նախատեսված» բառից հետո լրացնել «՝ օրինական ուժի մեջ մտած» բառերը:

Հոդված ~~29~~36. Օրենսգրքի 386-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «ակտը» բառից առաջ լրացնել «դատական» բառը:

Հոդված ~~30~~37. Օրենսգրքի 395-րդ հոդվածի 2-րդ մասում «Վերաքննիչ» բառը փոխարինել «Վճռաբեկ» բառով:

Հոդված ~~31~~38. Օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ միջազգային դատարանը հաստատել է կողմերի միջև ձեռք բերված հաշտության համաձայնությունը (բարեկամական կարգավորումը) կամ Հայաստանի Հանրապետության կողմից արված միակողմանի հայտարարությունը.»:

Հոդված ~~32~~39. Օրենսգրքի 419-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «հատուկ ուսումնադաստիարակչական» բառերը փոխարինել «վերականգնողական» բառով.

2) 2-րդ մասում «Հատուկ ուսումնադաստիարակչական» բառերը փոխարինել «Վերականգնողական» բառով:

Հոդված ~~33~~40. Օրենսգրքի ~~483~~447-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ ~~19~~4-րդ ~~և 20-րդ մասերով~~մասով.

~~«19~~«4. Սույն հոդվածի 1-3-րդ մասերը չեն տարածվում իրավաբանական անձի վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ~~53~~հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքներով վարույթների վրա, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին:»:

Հոդված 41. Օրենսգրքի 460-րդ ~~գլուխն~~հոդվածի 3-րդ մասում «կիրառման» բառը փոխարինել «նշանակման» բառով:

Հոդված 42. Օրենսգրքի 483-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 483. Անցումային դրույթներ**

1. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ ~~է մտնում~~մտնելը հետաքննության մարմնի կողմից ստացված հանցագործության մասին հաղորդումները, որոնցով քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում չի կայացվել, քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, հսկող դատախազի միջոցով ուղարկվում են քննիչին՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

2. 2022 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հետաքննության մարմնի վարույթում գտնվող քրեական գործերը սույն օրենսգրքով սահմանված կարգով նախաքննություն կատարելու համար սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ օրվա ընթացքում, հսկող դատախազի միջոցով ուղարկվում են քննիչին՝ պահպանելով սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

3. Սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման ժամկետները գործում են 2023 թվականի հունվարի 1-ից~~:~~ հետո մեղադրյալի կարգավիճակ ստացած անձանց համար: Մինչ այդ մեղադրյալի կարգավիճակ ստացած անձանց նկատմամբ սույն օրենսգրքով սահմանված քրեական հետապնդման ժամկետները սկսում են հաշվարկվել 2023 թվականի հունվարի 1-ից:

~~20~~4. Մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը կասեցված քրեական գործերով վարույթները մեկ տարվա ընթացքում քննիչի կամ դատարանի որոշմամբ վերսկսվում են և քննվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

5. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և բողոքների քննությունն իրականացվում է մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

6. Այն քրեական գործերը, որոնցով սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նախաքննությունն ավարտվել է մեղադրական եզրակացությամբ կամ եզրափակիչ ակտով, դատարան են ուղարկվում և քննվում սույն օրենսգրքով սահմանված կարգով:

7. Այն քրեական գործերը, որոնցով մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը դատական քննություն նշանակելու մասին որոշում է կայացվել, քննվում և լուծվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

8. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելը կայացված դատական ակտերով վերաքննիչ և վճռաբեկ բողոքները բերվում և քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

9. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ նոր կամ նոր երևան եկած հանգամանքների, ինչպես նաև հիմնարար խախտման հիմքով բերված բողոքները սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց հետո քննվում են մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը գործող կարգով:

10. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի դեմ 2022 թվականի հուլիսի 1-ից սկսած բացառիկ վերանայման բողոքները բերվում և քննվում են սույն օրենսգրքով սահմանված կարգով:

11. Մինչև սույն օրենսգիրքն ուժի մեջ մտնելն ստացված ապացույցների թույլատրելիությունը որոշվում է դրանց ձեռքբերման ժամանակ գործող օրենսդրությանը համապատասխան:

12. Սույն օրենսգրքի 8-րդ հոդվածով սահմանված վարութային գործողությունների՝ էլեկտրոնային եղանակով ամրագրմանը վերաբերող դրույթներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից~~:»~~:

~~**Հոդված 34.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «~~13. Սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը՝ հակակոռուպցիոն պալատին վերաբերող կարգավորումների մասով, 260-րդ հոդվածի 3-րդ մասը՝ 4-րդ մասի վերաբերյալ բացառության մասով, և 4-րդ մասը ուժի մեջ են մտնում Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի գործելու պահից: Սույն օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանում բողոքների վերաբաշխումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-24-Ն սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

14. Սույն օրենսգրքի 123-րդ և 124-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

15. Սույն օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ին: Մինչ այդ գործում են սույն հոդվածի 16-րդ և 17-րդ մասերով սահմանված քննչական ենթակայության կանոնները:

16. Մինչև 2023 թվականի հունվարի 1-ը գործում են քննչական ենթակայության հետևյալ կանոնները՝

1) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները, եթե հանցանքները կատարվել են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի ա) ենթակետով սահմանված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող, ինչպես նաև բ-գ ենթակետերում նշված պաշտոնատար անձանց կողմից՝ իրենց պաշտոնեական դիրքի հետ կապված, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 272-277-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնցով նախաքննությունը կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

2) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 441-րդ և 549-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները, բացառությամբ երբ արարքը կատարվել է ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 218-221-րդ, 231-րդ, 232-րդ, 435-439-րդ, 442-445-րդ, 480-482-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում են բացառապես հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները,

4) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 133-րդ, 134-րդ, 136-138-րդ, 142-146-րդ, 149-154-րդ, 308-314-րդ, 316-րդ, 317-րդ, 331-333-րդ, 349-րդ, 350-րդ, 418-429-րդ, 451-րդ, 469-471-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

5) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 267-269-րդ, 271-րդ, 281-րդ, 282-րդ, 284-290-րդ, 294-րդ, 409-րդ, 410-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի կամ պետական եկամուտների կոմիտեի քննիչները,

6) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-293-րդ, 340-րդ, 399-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության կամ պետական եկամուտների կոմիտեի քննիչները,

7) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 135-րդ, 139-141-րդ, 147-րդ, 148-րդ, 329-րդ, 330-րդ, 430-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի կամ ազգային անվտանգության ծառայության քննիչները,

8) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

9) Նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

10) Նախաքննությունը քննչական կոմիտեում, պետական եկամուտների կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույն մասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

11) Նախաքննությունն ազգային անվտանգության ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույն մասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

12) Սույն մասի 5-7-րդ կետերով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը նախաձեռնել է տվյալ քրեական վարույթը, բացառությամբ այն դեպքի, երբ վերադաս դատախազը տվյալ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մյուս մարմնին՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով,

13) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 182-րդ, 238-րդ, 295-րդ, 446-րդ, 473-476-րդ, 483-րդ, 485-րդ, 495-րդ, 503-րդ, 504-րդ, 509-511-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում է նախաքննության այն մարմինը, որի կողմից իրականացվող վարույթի ընթացքում բացահայտվել է տվյալ հանցանքը, բացառությամբ սույն մասի 9-11-րդ կետերով նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

14) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում է նախաքննության այն մարմինը, որի կողմից իրականացվող վարույթի ընթացքում բացահայտվել է տվյալ հանցանքը, բացառությամբ սույն մասի 1-ին կետով նախատեսված դեպքերի,

15) Նախաքննության տարբեր մարմինների քննիչներին ենթակա հանցանքների վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու կամ վարույթի ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն մասի 13-րդ կետով չնախատեսված հանցանքի բացահայտման դեպքում ենթակայության հարցը որոշում է վերադաս դատախազը՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով, բացառությամբ սույն մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների, ինչպես նաև սույն մասի 9-11-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

16) Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է պատշաճ, համակողմանի և անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար,

17) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան ձևակերպված՝ քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն մասով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան:

17. 2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի հունվարի 1-ը գործում են քննչական ենթակայության հետևյալ կանոնները՝

1) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները,

2) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 133-րդ, 134-րդ, 136-138-րդ, 142-146-րդ, 149-154-րդ, 308-314-րդ, 316-րդ, 317-րդ, 331-333-րդ, 349-րդ, 350-րդ, 418-429-րդ, 451-րդ, 469-471-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

3) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 135-րդ, 139-141-րդ, 147-րդ, 148-րդ, 291-293-րդ, 329-րդ, 330-րդ, 340-րդ, 399-րդ, 430-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի կամ ազգային անվտանգության ծառայության քննիչները,

4) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այլ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

5) Նախաքննությունը հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն իրականացնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

6) Նախաքննությունը քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույնմասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են ազգային անվտանգության ծառայության քննիչները,

7) Նախաքննությունն ազգային անվտանգության ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերագրվող հանցանքների կամ նրանց պաշտոնեական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կատարված՝ սույն մասի 1-ին կետով չնախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են քննչական կոմիտեի քննիչները,

8) Սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով նախաքննությունը կատարում է այն մարմինը, որը նախաձեռնել է տվյալ քրեական վարույթը, բացառությամբ այն դեպքի, երբ վերադաս դատախազը տվյալ վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մյուս մարմնին՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով,

9) Նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 182-րդ, 238-րդ, 295-րդ, 446-րդ, 473-476-րդ, 483-րդ, 485-րդ, 495-րդ, 503-րդ, 504-րդ, 509-511-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում է նախաքննության այն մարմինը, որի կողմից իրականացվող վարույթի ընթացքում բացահայտվել է տվյալ հանցանքը, բացառությամբ սույն մասի 5-7-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

10) Նախաքննության տարբեր մարմինների քննիչներին ենթակա հանցանքների վերաբերյալ վարույթները մեկ վարույթում միացնելու կամ վարույթի ընթացքում այլ քննիչին ենթակա և սույն մասի 9-րդ կետով չնախատեսված հանցանքի բացահայտման դեպքում

ենթակայության հարցը որոշում է վերադաս դատախազը՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով, բացառությամբ սույն մասի 1-ին կետով նախատեսված հանցանքների, ինչպես նաև սույն մասի 5-7-րդ կետերում նշված անձանց վերագրվող հանցանքների վերաբերյալ վարույթների,

11) Բացառիկ դեպքերում գլխավոր դատախազն իրավասու է իր որոշմամբ նախաքննության մեկ մարմնի քննիչի կողմից իրականացվող վարույթով նախաքննությունը շարունակելը հանձնարարելու նախաքննության մեկ այլ մարմնի, եթե դա որպես վերջին միջոց անհրաժեշտ է պատշաճ, համակողմանի և անաչառ նախաքննության կատարումն ապահովելու համար,

12) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին և օրենքին համապատասխան ձևակերպված՝ քրեական վարույթով իրավական օգնություն ցույց տալու մասին միջազգային հարցումները նախաքննության մարմինները կատարում են սույն հոդվածով սահմանված քննչական ենթակայությանը համապատասխան:

18. Սույն օրենսգրքի 192-195-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

19. Սույն օրենսգրքի 212-րդ, 329-րդ և 415-րդ հոդվածներով սահմանված՝ հոգեբանի մասնակցության փոխարեն մինչև 2023 թվականի հունվարի 1-ը իրավաչափ համարել մանկավարժի կամ սոցիալական աշխատողի մասնակցությունը:

20. Սույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 1-ից: Մինչ այդ սույն օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված քննչական գործողությունները կատարվում են ընթերակաների պարտադիր մասնակցությամբ՝ սույն օրենսգրքի 210-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բացառության հաշվառմամբ:

21. Սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասը և 262-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ են մտնում հակակոռուպցիոն դատարանի գործելու պահից:

22. Սույն օրենսգրքի 263-րդ հոդվածի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև տարածքային ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները կիրառվում են սույն օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրվանից, առաջին

ատյանի ընդհանուր իրավասության և հակակոռուպցիոն դատարանների միջև ընդդատության մասին վեճերին վերաբերող կարգավորումները՝ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահի նշանակման պահից: Մինչև սույն հոդվածի՝ համապատասխան կարգավորումը կիրառվելը Վճռաբեկ դատարանում ստացված ընդդատության մասին համապատասխան վեճը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից՝ համապատասխան որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում:

23. Սույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների բացառության մասով, 261-րդ հոդվածի 7-րդ մասի և 262-րդ հոդվածի 2-րդ մասի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների վարույթում գտնվող կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերի (վարույթների) վերաբաշխումն իրականացվում է ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-331-Ն սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով և դեպքերում:

24. Սույն օրենսգրքի 53-րդ գլուխն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

25. Սույն օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքով վարույթը կիրառվում է այն իրականացնելու իրավասություն ունեցող դատարանների ստեղծումից կամ դատավորների նշանակումից հետո սկսված քրեական վարույթներով: Մինչ այդ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների վերաբերյալ վարույթներով քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով:

26. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության ~~օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի~~ օրենսգրքի 54-րդ, 54.1-ին, 54.2-րդ, 54.3-րդ, 54.4-րդ գլուխների դրույթներն ուժը կորցրած չեն ճանաչվում:»:

Հոդված 43. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Օրենսգրքի ուժի մեջ մտնելու օրը: